թեան, վարուց և արդեանց և համբաւի մասին տեսնել գրած-եալ Դարանաղցին (էջ 393-397)։ Մոկացի վրդ. բացի իր նուի-րակութեան այս ծառայութիւններէն, Ս. Յակոբի վանքին կը նուիրէ 1631 ին ձեռագիր Ագաթանգեղոս մը, որուն ինքնագիր մէկ յիշատակարանին մէջ կը գրէ հետեւեալը. «ի թվին Հա-յոց Ո և Ձ (= 1631) ի ժամանակս յորում էր հայրապետ սբ. երուսաղէմի Դանձակեցի տր Գրիգոր Սրբազան, . . . ես նուաստ Մոկացի պիտակ անուն վրդ. ե. պատուական գիրք տուի յիշատակ Ս. երուսաղիմայ ի դուռն սբ Յակոբայ. նախ Աստուածաշունչ՝ հին և նոր կտակարանք՝ ի մի տուի. (ՄՋ. թ. 100, Խապ. Յուց. Ը. էջ 608)։ Երկրորդ գիրքն է. պատմա-գիրքն և մեծ հարանց վարքն ի մի տուի։ Երրորդ գիրքն է. արո-տաքին և Սահմանքն Դաւթի, բովանդակ բնաբանքն, և մեկ-նիչքն և լուծմունքն է. ի մի տուի։ Զորրորդ գիրքն Տաթեւա-ցւոյ չինած նոյն արտաքին է. գրոց լուծմունքն ի մի տուի։ Հինգերորդ գիրքն կանոնագիրքն եւ դատաստանագիրքն և տասն ասացուածքն ի մի տուի» (Պատմագիրք, էջ ԻԴ)։ 1637ին կարապետ վրդ. վախճանած է երուսաղէմ եւ թաղուած է Ս. Փրկչի վանքին մէջ. (ՄՋ. թ. 79)։

ԿԱՐԱՊԵՏ ՎՐԴ. ՆԱԽիՋԵԻԱՆՑի.— 1859 ին ուխտաւորու-թեամբ կ'այցելէ Ս. Յակոբի Վանքը։

ԿԱՐԱՊԵՏ ՎՐԴ.—Մբ. Նւ. Աժտէրխանի 1791ին, կը վախ-ճանի Նուիրակութեան պաշտօնին մէջ։

ԿԱՐԱՊԵՏ ՎՐԴ.—Մբ. Նւ. Արղնիի, կը վախճանի 1799ին։

ԿԱՐԱՊԵՏ ՎՐԴ. ՋՆՓՈՒՇՑի, Տ. ԴԱԲՐԻԷԼԵԱՆ.—Մբ. Ջռ. 1902ին. Ժամանակ Դամասկոսի (1903-1906). հիւրընկալ (1910—1911) կը մեկնի Մուշ 1911ին, նահատակ 1914ին ի Խարբերդ։

ԿԱՐԱՊԵՏ ՎՐԴ.—Մբ. 1843ին։

ԿԱՐԱՊԵՏ ՎՐԴ. ՎԱՅՈՑՁՈՐԵՑի.—Մբ. 1497 ին ուխտաւո-րութեամբ կ'այցելէ Ս. Յակոբի վանքը և կ'ընտրուի Լսպ. (ՄՋ. թ. 265)։ Կարապետ վրդ. սոյն ձեռագրին նորոգութեան առ-թիւ, գրած է ոտանաւոր յիշատակարան մը, որմէ կը հասկը-ցուի իր ինքնութիւնը. հոս կը դնենք նոյնին ընդօրինակու-թիւնը.